

քը՝ Երուսաղէմ եկաւ, և բազմաթիւ հայրերու հանդիպելով, և Իւրաքանչիւրին վանքն ուսումնասիրելով և այդ տպաւորութիւնը կրելով իր անձին վրայ՝ եկաւ և Երանելի Թէոդոսի վանքը մտնելով՝ վանական սքեմն հագաւ, և վանականօրէն կրթուելով և վանական առաքինութիւններէ շրջապատուած՝ իր վարքին հիմը ըրաւ խոնարհութիւնը և հեղութիւնը: Առաքինասէր ճգնութեան բոլոր փորձերէն անցնելով՝ շատ ու զանազան սպասարկութիւններ կատարեց այդ վանքին մէջ, և յայտնապէս հըրահանգուած ըլլալով՝ վանքին մէջ երկրորդ եղաւ 15 տարիներ, և ըստ այսմ հաւանութեամբ մեծ արբային Թէոդոսի՝ անոր վախճանումէն յետոյ ստանձնեց վանքին առաջնորդութիւնը: Երանելին Սոփրոնիոս հօրեղբորորդի մը ունէր Մամաս անունով: Այս Մամասը երիտասարդութեան մէջ՝ արկածի մը հետեանքով, ներքինացուած էր բժիշկներու ձեռամբ: Բիւզանդիոն երթալով Անաստաս Թագաւորին սենեկապալնն եղաւ, և հետզհետէ յառաջդիմելով հրաւեանատրի պաշտօնին ալ բարձրացաւ: Ասիկա շատ ձօխ ու առատ նուէրներ ըրաւ վանքին: Այդ նուէրներուն շնորհիւ՝ սուրբն Սոփրոնիոս քառապատիկ ընդարձակութեամբ լայնցուց վանքը, երանելի Թէոդոսի ննջումէն վերջը: Ի հիմանէ շինեց նոյն վանքին մէջ եկեղեցի մը յանուն Ամէնօրհնեալ Սուրբ Աստուածածնի և միշտ կուսին Մարիամու: Բայց Ի՛նչ հարկ որ ամէն ինչ թուեմ մի առ մի: Սոփրոնիոսի աշխատանքներն ու բարեկարգութիւնները մեծապէս փայլեցան Երանելի արբայ Թէոդոսի վանքին մէջ. վասն զի ոչ միայն տարուէ տարի աւելցուած շէնքերով և եկամուտներով հարստացուց զայն, այլ և անոր մէջ եռապատիկ բազմացուց վանականներու թիւը. և համառօտ խօսելով՝ 14 տարի և 2 ամիս բարւոք կառավարելէ յետոյ այդ վանքը, ուրախ սրտով մեռաւ 543ին, մարտ ամսու 21ին:

Երբ մօտ էր վախճանելու՝ ըսաւ իր մօտ կեցող ու լացող աշակերտին. «մի՛ ցաւիր որդեակս, եթէ երբեք համարձակութիւն գտնեմ, եօթներորդ օրը կ'առնեմ. քեզ, որպէսզի ինձի հետ ըլլաս հանգստեան տեղւոյն մէջ», ինչ որ պատահեցաւ. վասն զի եօթներորդ օրը մեռաւ աշակերտը, ու ամէնքը վերահասու եղան Սոփրոնիոսի համարձակութեանը Աստուծոյ մօտ» (Տե՛ս քնագիրը 111-3): Այս տողերը ինքնին պերճախօս են ճանչցնելու համար հայազգի Սոփրոնիոսի իր սրբակեաց կեանքին, գոր-